

«Ապահովագրական գործ» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Ապահովագրական գործ» մագիստրոսական նոր կրթական ծրագրի կոնցեպտուալ փոփոխություններից է այն, որ ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը և ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից ներկայացված առաջարկությունները: Փոփոխություններից է նաև ծրագրի տևողությունը, նախկին 2 տարվա փոխարեն լինելու է 1.5 տարի, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ, ժամը 18:15-ին: Դասապրոցեսը կազմակերպվելու է մոդուլային սկզբունքով և որոշ մոդուլներից հետո մագիստրոսը պետք այցելի ապահովագրական ընկերություն, իրականացնի հետազոտություն և պաշտպանի այն: Դասավանդման ընթացքում առավելապես կարևորվելու են ուսանողի հմտություններն ու կարողությունները, որոնք միտված են լինելու դեպի աշխատաշուկայի պահանջների բավարարմանը:

Փաստենք, որ դասավանդումն իրականացվելու է բացառապես ուսանողակենտրոն սկզբունքով, որտեղ կիրառվելու են այնպիսի ուսումնառության մեթոդներ, ինչպիսիք են բանավեճը (debate), ուղեղային գրոհները (Brainstorm), օրինակների հիման վրա դասավանդումը (Case study) և այլն:

Կարևոր է նաև նշել, որ դասավանդողները ՀՀ ապահովագրական ընկերությունների ղեկավար կազմից են, ովքեր ունեն ոչ միայն մասնագիտական կարողություններ, այլև՝ մանկավարժական հմտություններ:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը՝ 1 մլն. 50 հազ. ՀՀ դրամ:

Մասնագիտության նկարագիրը

«Ապահովագրական գործ» ծրագրի կարևորությունն այն է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ապահովագրական ընկերությունների ակտիվների մասնաբաժինը, ֆինանսավարկային ոլորտի և կենսաթաշակային ֆոնդերի ակտիվներից հետո երրորդն է, ինչը վկայում է կարևորության, հետևաբար՝ նաև այդ մասնագիտության նկատմամբ աշխատաշուկայի մեծ պահանջարկի մասին: Ընդ որում, այդ մասնագիտության նկատմամբ մեծ պահանջարկ է առկա նաև ամբողջ աշխարհում: Ապահովագրական ուղղությունը բարձրագույն կրթության ոլորտում հանրահայտ և պահանջված մասնագիտացումներից է: Հատկանշական է նաև այն, որ շրջանավարտների կողմից ավանդաբար հրապուրիչ աշխատավայր է համարվում ապահովագրական համակարգը և ՀՊՏՀ-ի տարբեր մասնագիտությունների շրջանավարտների մեծ մասն աշխատանք ունենալու նպատակով հիմնականում դիմում է ապահովագրական ոլորտ և ապահովում կարիերայի աճ:

Կրթական ծրագրի հիմնական նպատակն է պատրաստել անհրաժեշտ վերջնարդյունքներով օժտված բարձրակարգ մասնագետներ, ովքեր ունակ են միջազգային և հայրենական առաջավոր փորձի հիման վրա իրականացնել ապահովագրական գործունեություն և ապահովագրական ընկերություններին յուրահատուկ ապահովագրական (ակտուարական, անդերրայթինգային, սակագնային), ֆինանսական և ներդրումային գործունեություն, մշակել և ներդնել ժամանակակից նոր ապահովագրական պրոդուկտներ, ունենալ/տիրապետել գիտելիքների ապահովագրական ընկերությունների գործառնությունների իրականացման, ապահովագրական ընկերությունների կապիտալի ձևավորման, ներգրավված միջոցների հիման վրա ապահովագրական տեխնիկական պահուստների (ԶԱՊ, ՆԶՊՊ, ՏԶՊՊ, մաթեմատիկական պահուստ և այլն) ձևավորման և դրանց տեղաբաշխման, ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովման ձևերի և մեթոդների, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործիքների և դրանց կիրարկման առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ-ում ապահովագրական մեխանիզմների կատարելագործման նպատակով կիրառել միջազգային առաջավոր փորձը:

Շրջանավարտները, համապատասխան վերջնարդյունքեր ստանալով, որպես ղեկավար կազմ, կարող են աշխատանքի անցնել հետևյալ կազմակերպություններում.

- Միջազգային ապահովագրական կառույցներ (համաշխարհային ապահովագրական ասոցիացիա, ակտուարների միջազգային ասոցիացիա, միջազգային ավտոապահովագրողների բյուրո, ապահովագրական սինդիկատներ, ապահովագրական փուլեր և ՓԱՄ-եր),
- Ապահովագրական ընկերություններ,
- Կենտրոնական բանկ,
- Վերաապահովագրական ընկերություններ,
- Բրոքերային ընկերություններ և գործակալություններ,
- Ավտոապահովագրական բյուրո,
- Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալություն,
- Ապահովագրական ասոցիացիաներ,
- Կենսաթոշակային ֆոնդեր,
- Այլ ֆինանսական ինստիտուտներ:

«Ապահովագրական գործ» մասնագիտության դասախոսների կազմում կլինեն Հայաստանի ապահովագրողներ բյուրոյի, «Արմենիա Ինշուրանս» ԱՓԲԸ-ի, «Ռոյալ ինթերնեշնլ գրուպ»-ի, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի ղեկավար կազմի ներկայացուցիչներ:

